ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1970 թ. նոյեմբերի 17—20-ը կայացավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի հոբելյանական ընդհանուր ժողովը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին։

Ժողովի պլենար և սեկցիոն նիստերում լսվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսների, թղթակից-անդամների, գիտության դոկտորների ու թեկնածուների 23 զեկուցում՝ նվիրված մի շարք կարևոր պրոբլեմների։

Նոյեմբերի 17-ի պլենար նիստում բացման խոսքով հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Պ. Աղայանը, որը նշեց սովետական իշխանության հաստատման խոշոր դերը հայ ժողովրդի ամբողջ պատմության մեջ և համառոտակի ուրվագծեց սովետահայ հասարակական գիտությունների նվաճումները։

«Սովետական Հայաստանը 50 տարում» զեկուցմամբ պլենար նիստում հանդես եկավ պատմ. գիտ. դոկտոր Ա. Մ. Հակոբյանը։ Այնուհետև լսվեց պատմ. գիտ. դոկտոր Խ. Հ. Բարսեղյանի զեկուցումը, որ նվիրված էր «Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորումը» թեմային։

Նոյեմբերի 18—20-ին կայացան սեկցիոն նիստերը։ Պատմական գիտությունների սեկցիայում «Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների առաջացման հարցի շուրջը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը։ *Պրոֆ.* Գ. Բ. Պետրոսյանը *զեկուցեց «Հայկական «Աշխարհացույցի» հեղինակի պրոբլեմը» նյութի մասին։ Պատմ. գիտ. դոկտոր* Ռ. Ե. Սարգսյանի *զեկուցումը նվիրված էր հին Հայաստանի պատմության պրոբլեմներին՝ սովետահայ պատմագրության մեջ, իսկ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ* Բ. Ն. Առաքելյանի *զեկուցումը՝ «Հնագիտական ուսումնասիրությունը Հայաստանում հիսուն տարում» նյութին։ Այդ սեկցիայի նիստերում լսվեցին նաև պատմ. գիտ. թեկնածու* Հ. Գ. Ինճիկյանի *(«Սովետահայ արևելագիտության նվաճումները 50 տարում»), պատմ. գիտ. թեկնածու* Դ. Ս. Վարդումյանի *(«Սովետահայ ազգագրությունը 50 տարում»), բանաս. գիտ. թեկնածու* Մ. Ա. Բաբլոյանի *(«Հայ մամուլի պատմագրության մի քանի հարցեր»), պատմ. գիտ. թեկնածու* Վ. Կ. Ոսկանյանի *(«Գաղութահայության պատմությունը որպես պատմագիտական պրոբլեմ») զեկուցումները։*

Բնանսիրական գիտությունների և արվեստագիտության սեկցիայում լսվեց ութ զեկուցում։ «Սովետահայ բանագիտությունը հիսուն տարում» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ղանալանյանը։ *Բանաս. գիտ. դոկտոր* Ս. Բ. Աղաբաբյանի *զեկուցման թեման էր «Հայ գրականության գեղարվեստական նոր բովանդակությունը»։ «Սովետահայ գրականագիտության 50-ամյա ուղին» զեկուցումով հանդես եկավ բանաս. գիտ. դոկտոր* Ս. Ն. Սարինյանը։ *Բանաս. գիտ. թեկնածու* Հ. Օ. Մարգարյանի *ելույթը նվիրված էր սփյուռքահայ գրականությանը։ Սովետահայ լեզվաբանության նվաճումները լուսաբանվեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ* Է. Բ. Աղայանի *«Սովետահայ լեզվաբանության անցած ուղին» զեկուցման մեջ։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ* Գ. Բ. Ջահուկյանի *զեկուցումը վերնագրված էր «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը»։ Բանաս. գիտ. դոկտոր* Ս. Գ. Աբրահամյանը *զեկուցեց «Հայոց լեզվի զարգացումը սովետական ժամանակաշրջանում» նյութի մասին, իսկ արվեստագիտության դոկտոր* Ռ. Կ. Զարյանը *իր զեկուցման մեջ կանգ առավ սովետահայ արվեստագիտության տարբեր ճյուղերի նվաճումների վրա։*

Տնտեսագիտության, փիլիսոփայության և իրավունքի սեկցիայի նիստում լսվեցին տնտ. գիտ. դոկտոր Ռ. Ն. Թովմասյանի *(«Սովետահայ տնտեսագիտական մտքի զարգացումը»), տնտ. գիտ. թեկնածու* Մ. Խ. Քոբանյանի *(«Գիտատեխնիկական առաջադիմության նյութական խթանումը»), իրավաբ. գիտ. դոկտոր* Ա. Զ. Բեգյանի *(«Սովետական Հայաստանի պետական զարգացումը 50 տարում»), փիլ. գիտ. թեկնածու* Ա. Մ. Էկմալյանի *(«Սոցիոլոգիան և պատմական մատերիալիզմը») և փիլ. գիտ. թեկնածու* Ա. Մ. Թևոսյանի *(«Տրամաբանական մտքի զարգացման հիմնական ուղղությունները Հայաստանում XIX դարում») զեկուցումները։*

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովը յուրահատուկ հաշվետվություն էր սովետահայ հասարակական գիտության տարբեր ճյուղերի 50 տարվա նվաճումների և առաջիկա խնդիրների մասին։

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ